ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար տպագրության ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԱԱՀ-ԷԱՃԾՁԲ-25/115 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված N ՀԱԱՀ-ԷԱՃԾՁԲ-25/115-1 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի հունիսի 22-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ գնման առարկայի ձեռքբերման համար «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

Փոփոխության նկարագրություն՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի և «Մոնոպրինտ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2026 թվականի հունիսի 22 -ին կատարված փոփոխությունների արդյունքում.

- Հաստատվել է Պայմանագրի Հավելված N 3-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-ը համաձայն՝ Համաձայնագիր 1-ի Հավելված 1-ի:

Փոփոխության հիմնավորում՝ 2025 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված N ՀԱԱՀ-ԷԱՃԾՁԲ-25/115-1 ծածկագրով պայմանագիրը կնքվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից ծառայության ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայության ձեռքբերման համար «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ**